ՆՈՐ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՔԱՐՎԱՍԼԱ. Սիոնիի փողոց 8**

Սիոնի եկեղեցու մոտակայքում գտնվում է մի շինություն, ուր XIX դարի սկզբին տեղակայված էր վաճառական Պ.Արծրունուն պատկանող Թբիլիսիի խոշոր քարավան-սարայներից մեկը: Արեւելքում Քարավան-սարայները հասարակական խոշոր կառույցներ էին, որ սովորաբար հանդիպում էին ճանապարհներին եւ ոչ բնակելի վայրերում ու ծառայում էին որպես ապաստարան ու կանգառ զբոսաշրջիկների համար:



Շինությունը, որի մասին եւ խոսվում է, կառուցվել է այն քարավան-սարայի տեղում, որ 1650 թվականին կառուցել է Ռոստոմ թագավորը եւ նվեր որպես փոխանցել Թբիլիսիի եպիսկոպոսին: Հետագայում, XVIII դարի պարսից արշավանքների ժամանակ քարավան-սարայն ավերվել է:

**(Սկիզբը՝ «Վրաստան», № 3-4, 5-6, 7-8, 9-10, 11-12, 13-14, 15-16, 17-18, 19-20, 21-22, 23-24, 25-26, 27-28, 29-30-ում)**

# . . . ԵՎ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

***Շարունակում ենք ներկայացնել հատվածներ «Թբիլիսի. զբոսաշրջիկի տեղեկատու» անգլերենով եւ ռուսերենով ուղեցույցի՝ մեր քաղաքի պատմական ու մշակութային արժեքավոր հուշարձանների եւ կառույցների մասին պատումնաշարից:***

Արդեն, Պ.Արծրունուն պատկանող շենքի մեջտեղի հատվածը զբաղեցրել է գեղեցիկ ավազաններով հսկայական բակը: Ներսում գտնվող բակն ամբողջովին շրջապատված է եղել պատկերասրահներով: Առաջին հարկում գործել են կրպակներ ու վարպետանոցներ, իսկ երկրորդ հարկի 25 խանութներում՝ վաճառվել է ասիական ու եվրոպական ապրանքատեսականի: 1885 թվականի մեծ հրդեհից հետո, շենքը վերակառուցվել է: Իսկ ճակատային մասը, որ դուրս էր գալիս Սիոնիի փողոց, 1912 թվականին ենթարկվել է կտրուկ փոփոխության, ձեռք բերելով մոդեռն ոճ: 1984 թվականի հերթական վերանորոգումից հետո, շենքում սկսել է գործել Ի.Գրիշաշվիլու անվան Թբիլիսիի Պատմության Թանգարանը՝ Քարվասլան:

**ԾԾՄԲԱՅԻՆ ԲԱՂՆԻՍՆԵՐ**
**(СЕРНЫЕ бАНИ)**

Հնուց ի վեր Թբիլիսին հայտնի է եղել իր ծծմբային բաղնիսներով: Ամենահինը դրանցից Իրակլի Երկրորդի բաղնիսն է եղել: Հենց Բաղնիսների կոչվող փողոցի վրա գտնվող կառույցներից ամենաուշագրավը Օրբելիա-



նու (երկնագույն) բաղնիսն է՝ սլաքաձեւ ճակատային մասով եւ կողքամասերի մինարեթներով: Այն կոչում են նաեւ «Ճրելի աբանո» (երփներանգ բաղնիս). անունը պայմանավորված է շքամուտքը զարդարող երփներանգ հախճասալիկների գոյությամբ: Ճակատային մասը զարդարող արեւելյան տարրերը գծվել են XIX դարի երկրորդ կեսին:

Բաղնիսներից յուրաքանչյուրը գտնվում է հողի մակերեւույթից ներքեւ, փակված է կիսաշրջաձեւ կամարներով եւ ունի բնական լուսավորում, որ երեւում է գմբեթների վրա տեղակայված ապակե լապտերների միջոցով: Հին ժամանակներում լոգանքի ժամանակը չէր սահմանափակվում եւ լողանալուց հետո նույնիսկ, մարդիկ կարող էին այստեղ մնալ մինչեւ լուսաբաց: Քաղաքացիների մեծ մասը հենց այստեղ էր սիրում վայելել հանգիստը, ճաշկերույթ կազմակերպել, քեֆ անել: Կանանց համար հատուկ օրեր էին նախատեսված: Քաղաքի խնամախոս-միջնորդուհիները շատ հաճախ հենց այստեղ էին հարսնացու ընտրում:

Ռուս հանճարեղ բանաստեղծ Ա.Ս.Պուշկինը ասում էր, որ իր կյանքում երբեք նման հաճույք չի ստացել, որքան թբիլիսյան ծծմբային բաղնիսներում: Նույն այդ անթաքույց հիացմունքն է հայտնել նաեւ Ալեքսանդր Դյուման. «Իմ ողջ հոգնածությունը հօդս ցնդեց»,- ասում էր նա,- «այժմ պատրաստ եմ սարեր բարձրանալ ու բարձունքներ նվաճել»: Իսկ հարյուր տարի անց մեկ այլ ռուս դասական՝ Ալեքսանդր Տոլստոյը հաստատում էր, որ նստելով մարմարե ավազանում, մարդ իրեն կամ Պոմպեոս կամ Լուկուլլոս է զգում:

Աղբյուրի հրաշագործ ուժի մասին կարելի է երկար խոսել, եւ սակայն առավել նպատակահարմար է գալ եւ սեփական մարմնի վրա փորձել ջրի հրաշագործությունն ու բուժիչ հատկությունը:

*(Շարունակելի)*

*Պատրաստեց*
***ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ***

ԲՈՒՀ

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԹՎՈՎ ԴԻՄՈՐԴՆԵՐ

***«Վրաստան» թերթը արդեն հաղորդել էր, որ ավարտվել է միասնական ազգային քննությունների համար դիմորդների գրանցումը:***

***Ինչպես նշեց քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, այս տարի քննություններին մասնակցելու համար գրանցվել են ռեկորդային թվով դիմորդներ՝ շուրջ 42 հազար: Նրանցից, ինչպես մեզ հայտնեցին ազգային կենտրոնում, 250-ից ավելին մեր երկրի հայկական եւ ռուսական դպրոցների շրջանավարտներ են:***

Քննությունների ազգային կենտրոնի տվյալներով, այս տարվա միասնական քննությունների համար գրանցվել է քննությունների նման համակարգի գործունեության պատմության մեջ դիմորդների ռեկորդային թվաքանակ: 2012 թվականին միասնական ազգային քննությունների համար գրանցվել էր 36 հազար դիմորդ, 2011 թվականին՝ 33 հազարից մի փոքր ավելի: Մինչ այդ, «ռեկորդակիրը» 2008 թվականն էր, երբ քննություններին մասնակցելու ցանկություն էր հայտնել 40 հազար դիմորդ: Թե ինչով է պայմանավորված այս տարի միասնական ազգային քննությունների նկատմամբ դիմորդների նման շահագրգռվածությունը, քննությունների ազգային կենտրոնում չեն մեկնաբանում: Մայա Միմինոշվիլու հայտարարությամբ, սույն հանգամանքը լուրջ վերլուծության կարիք ունի: Նրա խոսքերով, դեռ պարզելու են, թե դիմորդներից քանիսն են գրանցվել աշակերտի կարգավիճակով եւ քանիսն են քննությունները հանձնելու էքստեռն կարգով:

Թեպետ նշենք, որ արդեն մի քանի ամիս է, ինչ խոսվում էր դիմորդների շարժառիթի ակտիվացման մասին: Դրա պատճառներից մեկն այն էր, որ այդ նպատակով հատկացված 8 միլիոն լարին հնարավորություն է ընձեռել լրիվությամբ ֆինանսավորել այնպիսի 14 մասնագիտություններով ուսուցումը, ինչպիսիք են ագրոնոմիան, կրթական գիտությունները, էներգետիկան եւ էլեկտրաինժեներիան, շինարարությունը, մաթեմատիկան, քիմիան, ֆիզիկան, կենսաբանությունը, էկոնոմիկան, հնագիտությունը, պատմությունը, վրաց բանասիրությունն ու ճարտարապետությունը: Բացի այդ, առանձին մասնագիտություններով իմացության նվազագույն բարձր մակարդակը հասցվել է մյուս մասնագիտությունների ցուցանիշին: Միաժամանակ, մասնակի 30, 50 եւ 70 տոկոսի գրանտներով հավասարապես կֆինանսավորվեն բոլոր մասնագիտությունները:

Հատկանշական է, որ 2013 թվականի ապրիլի 20-ին ավարտվեց միասնական ազգային քննությունների գրանցման միայն մի մասը: Մասնավորապես, ուսանող դառնալու ցանկություն ունեցողները վերջնականապես նշել էին միայն հանձնվելիք քննությունը, քննությունների հանձնման



քաղաքը եւ լեզուն: Ինչ վերաբերում է համալսարաններին ու ֆակուլտետներին, ուսումնական ծրագրերին, դրանց քանակությանն ու հերթականության փոփոխությանը (ավելացում, տանում), ապա գրանցված դիմորդները դրանք կարող են իրականացնել մինչեւ օգոստոսի վերջը, ուստի, մինչ այդ վաղաժամ է խոսել այն մասին, թե որ համալսարանում կամ որ ֆակուլտետում է ավելի բարձր մրցակցությունը: Մայա Միմինոշվիլու հայտարարությամբ, շատ են այն դիմորդները, որոնք իրենց դիմումներում ոչ մի ֆակուլտետ չեն նշել, քանզի դրա հստակեցման համար իրենք մի քանի ամիս ժամանակ ունեն:

Ներկա դրությամբ, միայն հայտնի է, թե քննական առարկաներից բոլորից շատ որն են գերադասում դիմորդները: Քննությունների ազգային կենտրոնի տեղեկատվությամբ, դիմորդների մեծամասնությունը՝ շուրջ 30 հազարը, որպես օտար լեզու գերադասությունը տվել է անգլերենին: Ինչ վերաբերում է ընտրովի առարկային, ապա՝ 11158 դիմորդ առավելությունը տվել է աշխարհագրությանը: Թվաքանակով հերթականությամբ հաջորդ առարկաները պատմությունը եւ մաթեմատիկան են:

Նշենք, որ այս տարի դիմորդների կողմից ընտրվելիք ուսումնական ծրագրերի թիվը սահմանափակ չէ: Եթե նրանք 2012 թվականին կարող էին ընտրել 20 ուսումնական ծրագիր, ապա 2013 թվականին ուսանող դառնալու ցանկություն ունեցողները կարող են նշել ուսումնական բոլոր ծրագրերը, որոնցում ընդգրկված են քննությունների համար իրենց կողմից ընտրված առարկաները:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ՈՎ ԿՕԳՆԻ ԱՍԼԱՆՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

***16 տարեկան Միհրան Ասլանյանը արդեն 6 տարի է, ինչ աշխատում է եւ պահում ընտանիքը՝ հիվանդ մորն ու իրեն: Մայր ու որդի ապրում են ֆերմայում, որտեղ Միհրանն աշխատում է: Ընտանիքը, Միհրանի 200 լարի աշխատավարձից բացի, որեւէ օգնություն եւ եկամուտ չունի:***



Ֆերմայի տարածքում կա մի փոքր սենյակ՝ փոքր սեղանով, վառարանով եւ երկու մահճակալով: Հենց այստեղ են ապրում Մարինա եւ Միհրան Ասլանյանները:

Ծագումով նրանք Բավրա գյուղից են, որտեղ Մարինայի մոր մահից հետո, նրանց տուն էր մնացել, թեպետ այդ տանը հիմա ոչ ոք չի ապրում, քանի որ այն աղետալի վիճակում է՝ քանդված տանիք, հատակի փտած տախտակներ եւ աստիճանաբար քանդվող պատեր:

Միհրանը 10 տարեկան էր, երբ մայրը կաթված ունեցավ: 10 տարեկան պատանու ուսերին մնաց ընտանիքի բեռը, թողեց դպրոցն ու ֆերմայում որպես հովիվ սկսեց աշխատել:

Այս տարիների ընթացքում Միհրանը մի քանի անգամ փոխեց աշխատանքը, քանի որ առանձին ֆերմաներում բավարար աշխատավարձ չէին տալիս, որոշ տեղերում էլ պատկանելիք վարձատրությունը ամիսներով չէին տալիս:

Մայր ու որդի բնակավայրն էլ մի քանի անգամ փոխեցին, որտեղ Միհրանն սկսում էր աշխատել, ընտանիքը այնտեղ էլ բնակվում էր: Ի վերջո, Միհրանը հայտնվեց Խոսպիոյի ֆերմայում: 200 լարի աշխատավարձով նա գնում է մի պարկ ալյուր եւ դեղորայք՝ մոր համար: Երբեմն փողը չի բավարարում: Միհրանի գլխավոր հոգսը բնակարանը եւ աշխատանքը չկորցնելն է:

«Բոլոր օրերը իրար նման են եւ ամեն օր նույն աշխատանքն է: Արդեն վեց տարի է, ինչ չեմ երազում: Երազանքներին չեմ հավատում: Անասուն խնամելուց բացի, ոչինչ չգիտեմ: Մնում է միայն, որ իմ աշխատանքը լավ կատարեմ, որ այս աշխատանիքից չհեռացնեն»,- ասաց Միհրանը:

Միհրանի միագույն օրերը սկսվում են առավոտյան ժամը 7-ին: Նա գնում է անասունների մոտ, 3 ժամ խնամում-հետեւում է, ապա տուն վերադառնում, վառարանը վառում գոմաղբով, նախաճաշում ու հանգստանում: Ցերեկվա ժամը երեքին նորից գնում է անասուններին խնամելու եւ երեկոյան ժամը վեցին հոգնած վերադառնում, մորն օգնում տնային գործերում, հետո պառկում քնելու:

Միհրանն ու նրա մայրը ոչ ոք չունեն, ով կկարողանար օգնել նրանց: Միհրանն իր հորը չի հիշում, ո՛չ նա, եւ ո՛չ էլ մայրը այդ թեմայով խոսել չեն ցանկանում: Մարինան եղբայր ունի, որը ապրում է Ռուսաստանում, կնոջ տանը:

«Եղբայրս մեզ օգնելու հնարավորություն չունի, քանի որ նույն վիճակում է, ինչ որ մենք: Նա իր հիմնախնդիրներն ունի եւ անձնական կյանքը»,- ասաց Մարինա Ասլանյանը:

Միհրանն ու նրա մայրը, որպես սոցիալապես անապահով ընտանիք, ստանում էին 54 լարի օգնություն, սակայն արդեն մեկ տարի է, ինչ օգնությունն ընդհատվել է:

Վրաստանի սոցիալական օգնության գործակալության Ախալքալաքիի բաժանմունքում պարզաբանեցին, որ այդ ընտանիքի պետական օգնությունը այն պատճառով է ընդհատվել, որ հեռացել են հիմնական գրանցման վայրից՝ Բավրայից, եւ անընդհատ բնակավայր են փոխում: Եթե սոցիալական գործակալը մի քանի անգամ գնում է ընտանիքներում իրավիճակի ստուգման համար եւ գրանցման տեղում նրանց չի գտնում, ապա այդ ընտանիքն օգնություն ստացողների բազայից դուրս է մնում:

«Եթե հիմա նրանք դիմում ներկայացնեն, ապա կկարողանան կրկին ստանալ իրենց հասանելիք պետական 54 լարի օգնությունը»,- ասաց Վրաստանի սոցիալական օգնության գործակալության Ախալքալաքիի բաժանմունքի ղեկավար Արտաշ Փալանջյանը:

Տեղական իշխանության ներկայացուցիչներն էլ ասացին, որ եթե դիմեն համապատասխան փաստաթղթերով ու դիմումով, ապա նրանք անպայման օգնություն կստանան:

«Եթե Ասլանյանների ընտանիքը ներկայացնի համապատասխան փաստաթղթերը՝ «վկայականը», եթե նրանց սոցիալական վիճակը գնահատվել է 1-ից մինչեւ 80,000 միավոր, ապա հնարավորության սահմաններում նրանց կցուցաբերվի օգնություն: Դա կախված է նրանց ձեռքում գտնվող փաստաթղթերից»,- ասաց Ախալքալաքիի մունիցիպալիտետի վարչության առողջապահության եւ սոցիալական ապահովության ծառայության ղեկավար Սիսակ Ավագյանը:

Իսկ այն ժամանակ, երբ Ասլանյանների ընտանիքին հասանելիք օգնությունը ստանալու փաստաթղթերի կարգավորման համար անհրաժեշտ է այսուայնկողմ գնալ, 16 տարեկան Միհրանը ամեն օր արթնանում է առավոտյան ժամը 7-ին միայն մի նպատակով, որ իր գործը լավ կատարի եւ չկորցնի 200 լարի աշխատավարձն ու ապաստարանը:

***ՎԼԱԴԻՄԻՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***
***«Հարավային դարպաս»-ի թղթակից***
***Ախալքալաքիի շրջան***
***գ. Խոսպիո***

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ✻ ²ÚÈ²¼²Ü ✻ ÊàÐÐàôð¸Üºð

ÐºÎ²øðøð²Î²Ü

# Ո՞ՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ ՍԵՐԸ

***Իսկական սեր գոյություն ունի՞ արդյոք եւ որքա՞ն է այն տեւում։***

***Մ.ՍԱՐԳՍՅԱՆ***

***Թբիլիսի***



Այս միտքը շատերին է հետաքրքրել տարբեր ժամանակներում եւ հիմնականում այն կարծիքն է իշխում, որ երկարատեւ հարաբերությունները այնքան հաճույք չեն պատճառում, որքան նոր սիրավեպը։ Սակայն, ամերիկացի մասնագետները այլ եզրակացության են հանգել՝ ուսումնասիրություն անցկացնելով 17 տղամարդկանց եւ կանանց շրջանում, ովքեր միեւնույն զուգընկերոջ հետ ապրել էին ավելի քան 20 տարի եւ հավատացնում էին, որ իրենց երկրորդ կեսի նկատմամբ նույն ջերմ ու քնքուշ զգացմունքներն են տածում։ Բոլոր մասնակիցների ուղեղը նկարվեց, եւ այդ ընթացքում նրանք նայում էին իրենց ձեռքում բռնած ամուսնու նկարին։ Մարդկանց այդ խմբի ուղեղի նկարահանումը նույնպիսին ստացվեց, ինչպես նրանց մոտ, ովքեր նոր են սիրահարվել կամ նոր սիրավեպ են սկսել։

Բայց, ամեն դեպքում, նոր սիրահարվածների եւ ամուսնական երկարատեւ կյանքի փորձ ունեցողների մոտ կային ինչ-որ տարբերություններ։ Այսպես, նրանց մոտ, ովքեր նոր սիրավեպ էին սկսել, ակտիվանում էր ուղեղի այն հատվածը, որը պատասխանատու է կպչուն մտքերի ու կրքոտ ցանկությունների համար, իսկ ահա փորձառու ամուսիններին մոտ ակտիվանում են ուղեղի այն հատվածը, որ պատասխանատու է հանգստության եւ ցավի մեղմացման համար։

²èúðº²Î²Ü

# ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ «ԿՕԳՆԵՆ» ԱՐԱԳ ԱԶԱՏՎԵԼ ԿՆՈՋԻՑ



***Երբեմն, ուղղակի փախչում եմ տանից, որ կնոջս դիտողություններն ու փնթփնթոցը չլսեմ։ Գուցե խորհուրդ փաք, ինչպե՞ս կարելի է նման դեպքերում ազատվել դրանցից։***

***Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ***

***Ախալքալաքի***

Տղամարդկանց մեծ մասը չի էլ կասկածում, որ առաջին հայացքից սովորական թվացող որոշ արտահայտություններ կարող են նյարդայնացնել կանանց ոչ պակաս, քան տնով մեկ թափթփված գուլպաներն ու հերթական ֆուտբոլային խաղից հետո մնացած գարեջրի շշերը։ Պարզություն մտցնելու, ինչպես նաեւ հարյուրավոր ամուսնություններ քայքայումից փրկելու նպատակով «Живой журнал»-ի մասնակիցները կազմել են տղամարդկանց կողմից հաճախ օգտագործվող ամենավտանգավոր արտահայտությունների վարկանշային աղյուսակը, որոնք գործածությունից հանելով՝ տղամարդիկ կկարողանան իրենց երկրորդ կեսի հետ ավելի հեշտ լեզու գտնել։

Վարկանշային աղյուսակը գլխավորում է «տեսնենք» արտահայտությունը, որը նշանակում է, որ տղամարդու սրտով չէ ինչ-որ բան անելու կնոջ առաջարկը, սակայն հրաժարվելը կարող է հանգեցնել «միջազգային կոնֆլիկտի»։

Հաջորդ հայտնի արտահայտությունը «ես չգիտեմ»-ն է։ Ուղիղ պատասխանից խուսափելու դեպքում, իսկ ահա «իսկ իմ նախկին ընկերուհին» արտահայտությունը ամուսնության քայքայման ամենաարագ ճանապարհն է։ Կանանց հունից հանող ամենատարածված արտահայտությունն է «իսկ իմ մայրը դա ուրիշ ձեւ է պատրաստում»։ Վարկանշային աղյուսակում են նաեւ այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «մի րոպե...», «դու ինձ նման բան չես ասել», «ինքդ արա», «սովորական», «որտե՞ղ են իմ գուլպաները», ինչպես նաեւ տղամարդկանց լռությունը՝ ի պատասխան կնոջ հարցին։

ԲԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

# Ի՞ՆՉՆ Է ՎՆԱՍՈՒՄ ԼՅԱՐԴԻՆ



* Սննդի երկարատեւ ընդունումը, որն ուղեկցվում է սեղանի շուրջը նստած վիճակով։ Իհարկե, դա չի նշանակում, որ պետք է խուսափել կերուխումներից, բայց լավ կլինի ավելի շատ շարժվել ճաշատեսակների փոփոխությունների ընթացքում, որպեսզի արյան շրջանառությունն ու մարսողության պրոցեսը լավանան։

* Տապակած, կծու, ծխեցված, սառեցված սնունդը, ինչպես նաեւ՝ ալկոհոլը եւ գազավորված ըմպելիքները։

* Որոշ դեղամիջոցներ։ Նախքան ինչ-որ դեղամիջոցներ ընդունելը, կարդացեք ծանոթությունը, նաեւ՝ խորհրդակցեք բժշկի հետ։

* Լյարդի համար վնասակար են էներգետիկ ըմպելիքները։ Դրանք, ճիշտ է, իրենց ֆունկցիան կատարում են, բարձրացնում են տոնուսը եւ չեն թողնում հոգնել, բայց նաեւ պարունակում են ակտիվ տարրեր։ Դրանց թվում կան վիտամիններ, հանքային նյութեր, նեյրոխթանիչներ եւ այլ բաղադրիչներ։ Իհարկե, դրանք բոլորը վտանգավոր չեն եւ նույնիսկ օգտակար են, բայց՝ առանձինառանձին։ Այդ բոլոր տարրերի համադրությունը անթույլատրելի ծանրաբեռնվածություն է ստեղծում լյարդի համար, որը դեռ պետք է այդ ամբողջը մշակման ենթարկի։

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԿԱՆԱՅՔ ԱՅԴՔԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ինչպես հայտնի է, կինը ականջներով է սիրում։ Ինչո՞ւ են անհրաժեշտ նուրբ խոսքերը, ինչո՞ւ են կանայք այդքան կարեւորում հաճոյախոսությունները։ Ամեն ինչ շատ պարզ է։ Կնոջը հաճոյախոսելով՝ դուք մեկ հարվածով երկու նապաստակ եք սպանում, եւ բավարարում եք նրա սատարման ու հիացմունքի պահանջը։ Հաճոյախոսության արդյունավետությունը ուժգին է այն ժամանակ, երբ կնոջը հաճելի որեւէ բան ասելով՝ ցածրացնում եք ձեզ՝ բարձրացնելով նրա անհատականությունը որպես կին։*



Շատ հաճախ ճիշտ ընտրված խոսքերը ճիշտ ժամանակին կարող են հաջող ծանոթությունների, գայթակղությունների ականատես լինել եւ վերջապես կարող են կրակ հաղորդել արդեն ծավալված հարաբերություններին։ Եթե զույգերը միասին են արդեն մի քանի տարի, դա չի նշանակում, որ նրանց մոտ պակասել է հաճոյախոսությունների պահանջը։ Կանանց հետ շփումներում փորձառու տղամարդիկ կարծում են, որ հաճոյախոսությունը համեմունք է հարաբերություններում։ Դրանք այն խոսքերն են, որոնք օգնում են կնոջը զգալու ձեր կողմից ցուցաբերած ուշադրությունը, թե որքանով եք հետաքրքրված իրենով։

Սակայն, ոչ բոլոր կանայք են նախընտրում լսել հաճոյախոսություններ, սա պայմանավորված է որոշակի բարդույթներով։ Այսպիսի կանանց ավելի լավ է գործով ապացուցել ձեր հետաքրքրությունը։

**Ի՞նչ է պետք շշնջալ կնոջը**

«Միշտ կնոջը ասեք, որ նա այնպիսին չէ, ինչպիսին ուրիշները»,- ասել է անգլիացի գրող Ուինդեմ Լյուիսը։ Այն, ինչը հաճելի է ձեր աչքերի համար, դա էլ անհրաժեշտ է գովել, լինի դա նոր հագուստ, պայուսակ, սանրվածք, նրա հաճելի ժպիտը։ Հաճոյախոսությունը հատուկ անհրաժեշտ է տոնական օրերին։ Այս օրերին կինը անպայման կցանկանա գեղեցկանալ՝ նոր հագուստ կրելով, ոչ սովորական սանրվածքով։ Այստեղ պետք է շատ ուշադիր լինեք, որպեսզի ճիշտ ժամանակին նկատեք եւ հաճոյախոսեք փոփոխությունները։ Նույնիսկ իր վրա ամենավստահ կինը կարիք ունի հաստատման բանի, որ նա գրավիչ է։

**Առանձնացրեք ձեր ընտրյալին բոլորից**

Եթե հաճոյախոսում եք նոր ծանոթ կնոջ, ապա աշխատեք քիչ կատակել, հատկապես նրա արտաքինի վերաբերյալ։ Նա դա կարող է ճիշտ չհասկանալ։

Ձեր սիրելի կնոջ մեջ բազմաթիվ հաճոյախոսելու օբյեկտներ կան՝ նրա կանացիությունը, բարյացակամությունը, էլեգանտությունը, խելացիությունը, դյութիչ ձայնը, համբերատարությունը, կարեկցանքը, հոգատարությունը եւ բազմաթիվ այլ որակներ։ Կարեւորը՝ լինել ուշադիր, նկատել եւ անընդհատ արտահայտվել՝ համեմելով ձեր հարաբերությունները կանանց այդքան անհրաժեշտ, գեղեցիկ եւ հաճելի խոսքերով։

**Հաճոյախոսությունը ուշադրության նշան է**

Հաճոյախոսելը, ցավոք, բոլորին չէ, որ տրված է եւ բոլորի մոտ չէ, որ ստացվում է։ Հաճոյախոսել կարելի է սովորել եւ այս գիտության մեջ կարեւորը անկեղծությունն է։

Կեղծավորություն մի՛ արեք, քանի որ ցանկացած կեղծիք կանանց կողմից ընդունվում է ավելի վատ, քան սուտը։ Եթե չարաշահեք ստանդարտ բառեր, ինչպիսին օրինակ «ամենա-ամենա», «ընդմիշտ», ոչ ոք ձեզ չի հավատա։ Հաճոյախոսության մեջ ավելացրեք առանձնահատկություն, որը բնորոշ է այն կնոջը, որին հղում եք հաճոյախոսությունը։

Ո՛չ ձեր կնոջը, ո՛չ էլ այն կնոջը, որի հետ նոր եք ծանոթացել, չի կարելի ասել՝ «Դու այսօր շատ հմայիչ ես», կամ «Դու այսօր գեղեցիկ ես»։ Այս արտահայտությունները ուղղակի չեն ընդունվի, եւ նա կմտածի, որ երեկ դուք նրան հմայիչ չեք համարել։ Հաճոյախոսությունը արվում է հաստատուն եւ բարյացակամ տոնով. առանց ավելորդ ժեստերի ու դերասանական խաղի։

Եվ ամենակարեւորը, առիթը բաց մի թողեք հաճելի դարձնելու ձեր ընտրյալի օրը։ Բացահայտեք կնոջ մեջ թաքնված առավելությունները, որոնք արժանի են հաճոյախոսության եւ հաճոյախոսեք, խուսափեք ակնհայտ բաներ ասելուց եւ շաբլոն արտահայտություններ անելուց։

Եվ վերջում չմոռանանք նշել, որ հաճոյախոսությունները պետք է լինեն տեղին եւ ժամանակին։ Եթե «քո ժպիտը ինձ գերել է» արտահայտությունը անեք այն ժամանակ, երբ կինը նայում է ձեզ տխուր դեմքով, բնականաբար, ձեր հաճոյախոսությունը կորակվի չստացված եւ ամեն ինչ կփչացնի։ Կարողացեք լինել ուշադիր եւ ունակ եղեք զարմացնելու կանանց, ինչը, խոստովանում ենք, այդքան էլ հեշտ չէ։

# ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Սերը սեր կու բերե։

***ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ***
***(1712-1795)***
***Հայ բանաստեղծ, աշուղ***

Ինչ-որ ուզում ես, սիրով ավելի արագ կստանաս, քան սուր ճոճելով։

***ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ***
***(1564-1616)***
***Անգլիացի գրող***

Երջանիկ է այն կինը, ով իրենից ուժեղ տղամարդ է գտնում։

***ԺՈՐԺ ՍԱՆԴ***
***(1804-1876)***
***Ֆրանսիացի գրող***

Դուք, որ ցանկանում եք թագավոր դառնալ, արժանի թագուհի ընտրեք ձեզ համար։

***ԱՆԴՐԵ ՄՈՐՈՒԱ***
***(1885-1967)***
***Ֆրանսիացի գրող***

Մարդու իսկական կյանքը սկսվում է հիսուն տարեկանում։ Այն ժամանակ մարդը տիրապետում է այն ամենին, ինչի վրա խարսխվում են ճշմարիտ նվաճումները, ձեռք է բերում այն, ինչ կարելի է տալ ուրիշներին, ճանաչում է այն, ինչ կարելի է սովորեցնել, հարթում է այն, ինչի վրա կարելի է կառուցել։

***Ա.ԱՎԱԳՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Üº Î ¸ àÎÜºð

** Կինը հարցնում է ամուսնուն.*

*Սիրելի'ս, իսկ դու կարո՞ղ ես ինձ համար երկնքից աստղ իջեցնել։*

*- Իհարկե կարող եմ, սիրելի'ս։*

*- Սիրելի'ս, իսկ դու կարո՞ղ ես հանուն ինձ մեռնել։*

*- Իհարկե կարող եմ, սիրելի'ս։*

*- Սիրելի'ս, իսկ դու կարո՞ղ ես այսօր իմ փոխարեն ափսեները լվանալ։*

*- Դե, ընդհանրապես կարող եմ, բայց եկ առաջինը սկսենք։*

** - Այդ Դո՞ւք եք, աղավնյա՛կս, այդպես հիասքանչ դաշնամուր նվագում։*

*- Այո', բայց հասկացեք, ներե'ք, վաղը ես կարեւոր համերգ ունեմ, ես պատրաստվում եմ։*

*- Մոցա՞րտ է, այո՞։*

*- Դե, այո'։*

*- Ես Ձեզ անչափ երախտապարտ եմ։*

*- Դուք լացում եք երջանկությունի՞ց։ Ձեզ այդքան հուզել է դասական երաժշտությո՞ւնը։*

*- Օ, այո'։ Բացի այդ, զոքանչս է կախվել։*

** - Ես հարուստ տղամարդու չեմ փնտրում, ես փնտրում եմ այնպիսի տղամարդու, ով կհասկանա իմ հոգին։*

*- Իսկ եթե ավելի կոնկրե՞տ։*

*- Ով կարտոֆիլ կկլպեր ու կլվանար ամանեղենը։*

** Ուրիշինը մեզ պետք չէ, բայց մերը մենք կվերցնենք, ումն էլ որ այն լինի։*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԵՎՐԱՄԵՐՁԵՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՑ Է



*Ապրիլի 30-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Եվրոպական խորհրդարանի պահպանողականների եւ ռեֆորմիստների խմբակցության պատգամավորական պատվիրակությանը՝ Մարտին Քալանանի գլխավորությամբ:*

Ինչպես տեղեկացրին Հայաստանի նախագահի մամլո գրասենյակից, նախագահը գոհունակությամբ փաստել է, որ Հայաստան-Եվրոպական Միություն երկխոսությունը սահուն ու վերընթաց զարգացում է ապրում:

Սերժ Սարգսյանը վերահաստատել է տարբեր առիթներով մինչեւ այժմ արված հայտարարությունը, որ եվրամերձեցումը Հայաստանի արտաքին քաղաքականության կարեւոր բաղկացուցիչներից մեկն է:

Հայաստանի նախագահը եւ Եվրոպական խորհրդարանի պատգամավորներն անդրադարձել են Հայաստան-ԵՄ համագործակցության օրակարգի հարցերին, այդ թվում՝ հաջողությամբ ընթացող Ասոցացման համաձայնագրի բանակցություններին, ինչպես նաեւ Արեւելյան գործընկերության շրջանակներում փոխգործակցությանը: Հանդիպման մասնակիցները մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային խնդիրների ու մարտահրավերների, ԼՂ հիմնախնդրի կարգավորման ներկա փուլի շուրջ: Հյուրերի խնդրանքով, Հայաստանի նախագահը ներկայացրել է այդ հարցում հանրապետության դիրքորոշումները:

## «ԵՐԿԱՐԱԺԳՎՈՂ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



*Ապրիլի 29-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հայաստանյան առաքելության ղեկավար Մարկ Հորթոնին եւ ԱՄՀ հայաստանյան գրասենյակի մշտական ներկայացուցիչ Գիերմո Տոլոսային:*

Հանդիպման ժամանակ հիմնադրամի ներկայացուցիչները Հայաստանի նախագահին զեկուցել են ԱՄՀ «երկարաժգվող ֆինանսավորում»/«երկարաժգվող վարկավորում» ծրագրի եզրափակիչ փուլի արդյունքների մասին, որը մեկնարկել էր 2010թ. հունիսին եւ նախատեսվում է ավարտել ընթացիկ տարվա սեպտեմբերին: Հիմնադրամի առաքելության ղեկավարը արդյունավետ է համարել Հայաստանի կառավարության եւ Հայաստանի ԿԲ-ի հետ ԱՄՀ-ի համագործակցությունը: Զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանի տնտեսության ներկա վիճակին, տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին, զարգացման ծրագրերին, ինչպես նաեւ ԱՄՀ նոր ծրագրի շուրջ բանակցություններին վերաբերող հարցերին:

## ՔԱՅԼԵՐ՝ ԲԵՐՔԻ ՄԹԵՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ



*Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել բերքի մթերման ու արտադրանքի իրացման կազմակերպման շուրջ խորհրդակցություն:*

Հայաստանի գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Սերգո Կարապետյանը ներկայացրել է վարչապետ Սարգսյանի հանձնարարականով գյուղատնտեսության ոլորտի համապատասխան մասնագետների հետ ավելի վաղ անցկացված քննարկման արդյունքները:

Այդ համատեքստում քննարկվել են գյուղմթերք վերամշակող ընկերությունների ներկա վիճակին եւ մթերման հզորություններին առնչվող հարցեր: Վարչապետը հանձնարարել է համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին՝ շարունակել քննարկումները մթերումների կազմակերպման գործընթացում խնդիրները կարգավորելու համար:

## ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՀԱՎԵԼՈՒՄՈՎ

*Հայաստանի պետական բյուջեի եկամուտները այս տարվա առաջին եռամսյակում կազմել են շուրջ 231,3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 206,1 մլրդ դրամ, որոնք, համապատասխանաբար, 103 տոկոսով եւ 88,8 տոկոսով ապահովել են Հայաստանի կառավարության առաջին եռամսյակի կատարման ծրագիրը:*

Այս մասին ապրիլի 29-ին տեղեկացրեց Հայաստանի ֆինանսների նախարարի տեղակալ, գլխավոր գանձապետ Ատոմ Ջանջուղազյանը՝ ներկայացնելով 2013թ. առաջին եռամսյակի Հայաստանի պետական բյուջեի կատարողականը:

2013թ. առաջին եռամսյակում Հայաստանի պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 220 մլրդ դրամ հարկային եկամուտներ եւ պետական տուրքեր, որոնք կազմել են եռամսյակային ծրագրի 103,8 տոկոսը:

Այս տարվա հունվար-մարտ ամիսներին Հայաստանի պետական բյուջեն կատարվել է 25,1 մլրդ դրամ հավելուրդով՝ առաջին եռամսյակի ծրագրով նախատեսված 7,5 միլիարդ պակասուրդի դիմաց: Ներկայացված տեղեկատվության մեջ ներառված չեն արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի շրջանակներում տեղի ունեցող գործառնությունները բնութագրող ցուցանիշերը, քանի որ դրանք դեռեւս հայտնի չեն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԹՈՒՐՔԻԱ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ ԵՆ

*Հայաստանից Թուրքիա արտահանման ընդհանուր ծավալները 2013-ի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կրկնապատկվել են:*

Այդ մասին տեղեկացրին Հայաստանի կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից: 2013-ի առաջին եռամսյակում Հայաստանից Թուրքիա 404 հազար 100 դոլարի ապրանք է արտահանվել՝ 2012-ի նույն ժամանակաշրջանի 201 հազար 200 դոլարի դիմաց: Հայաստանից Թուրքիա արտահանման ծավալներում մեծ մասը խոշոր եղջերավոր անասունների անմշակ մորթին է՝ 301 հազար 900 դոլար ընդհանուր մաքսային արժեքով: 2013-ի առաջին եռամսյակում Թուրքիա է արտահանվել 33 հազար 200 հատ անմշակ մորթի՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 22 հազար 600 հատի դիմաց: Թուրքիայից Հայաստան ներմուծման ընդհանուր ծավալները 2013-ի առաջին եռամսյակում 40 միլիոն 369 հազար 600 դոլար է կազմել՝ գրեթե նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակին պահպանվելով:

2012-ին Հայաստանից Թուրքիա արտահանման ծավալները 927 հազար 800 դոլար էր կազմել, ներմուծմանը՝ 213 միլիոն 549 հազար 600 դոլար:

## ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑԻՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

*Հայաստանում վերջին մարդահամարի տվյալներով՝ երբեք ամուսնացած չի եղել տղամարդկանց 32.6 տոկոսը, ինչը 2.6 տոկոսով ավելի է 2001թ. մարդահամարի արդյունքներով գրանցված ցուցանիշից:*

Այս մասին ապրիլի 30-ին տեղեկացրին Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնից՝ ներկայացնելով 2011թ. մարդահամարի արդյունքում վիճակագրական տվյալները: Ըստ տվյալների՝ 2011թ-ին ամուսնացած է եղել տղամարդկանց 63 տոկոսը, իսկ 2001թ-ին՝ 65-ը:

2011թ. մարդահամարի տվյալներով՝ երբեք ամուսնացած չի եղել կանանց 24.6%-ը, ինչը 2001-ի համեմատ աճել է 1.8%-ով, ամուսնալուծված է եղել 3.8%-ը, ինչը նվազել է 0.3%-ով 2001թ. մարդահամարի արդյունքների համեմատ:



Ներկայացվեց նաեւ կանանց ու տղամարդկանց ամուսնության միջին տարիքը: 1990-ական թվականների կեսերին տղաների ամուսնության միջին տարիքը 27-ն է եղել, իսկ այսօր 29,5-ն է, աղջիկների դեպքում այն 22,3-ից բարձրացել է ու դարձել 25,6, ինչը նշանակում է, որ ամուսնության տարիքը թե' տղամարդկանց, եւ թե' կանանց դեպքում բարձրացել է շուրջ 2,5 տարով:

### ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Մայիսի 5-ին կանցկացվեն Երեւանի ավագանու ընտրությունները: Հայաստանի քաղաքապետի պաշտոնին հավակնում են ներկայիս քաղաքապետ Տարոն Մարգարյանը, արտաքին գործերի նախկին նախարար, ԱԺ պատգամավոր Վարդան Օսկանյանը: Առաջադրվել են նաեւ Արմեն Երիցյանի, Արմեն Մարտիրոսյանի, Վահագն Խաչատրյանի, Արմեն Ռուստամյանի, Գուրգեն Արսենյանի, Մեսրոպ Առաքելյանի թեկնածությունները:*

*Համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններին մասնակցում են Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, «Բարեւ Երեւան» կուսակցությունների դաշինքը, «Օրինաց երկիր» կուսակցությունը, ՀԱԿ-ն ու «Առաքելություն»-ը:*

### ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԱՅԻՍ-ՀՈՒՆԻՍԻՆ

*Հայաստանի կրթության եւ գիտության նախարարի պաշտոնակատար Արմեն Աշոտյանը հրաման է ստորագրել՝ «Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար 2013 թվականի բակալավրի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման բուհերի (ըստ մասնագիտությունների) ցանկը հաստատելու մասին»:*

*Հրամանի համաձայն՝ ըստ մասնագիտությունների (մասնագիտացումների) ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպվելու են մայիսի 16-ից մինչեւ հունիսի 16-ն ընկած ժամանակահատվածում:*

### ՀԱՅԿԱԿԱՆ ԾԽԱԽՈՏԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 22 ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

*Հայաստանից սիգարետի, սիգարիլաների եւ սիգարների արտահանման ծավալները 2013-ի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ավելացել են 5 անգամ: 2013-ի առաջին եռամսյակում Հայաստանից 1 միլիարդ 900 միլիոն 300 հազար հատ ծխախոտային արտադրանք է արտահանվել՝ 2012-ի 378 միլիոն 800 հազարի հատի դիմաց: 2013-ին մինչ այժմ արտահանված ծխախոտային արտադրանքի ընդհանուր մաքսային արժեքը գերազանցել է 21 միլիոն դոլարը: 2013-ին հայկական ծխախոտի խոշոր սպառողներից են Թուրքմենստանը, Իրաքը, Վրաստանը, Հորդանանը, Ռուսաստանը:*

*Հայկական ծխախոտը վաճառվում է աշխարհի 22 երկրներում: 2012-ին Հայաստանից արտահանման ընդհանուր ծավալները կազմել են 1 միլիարդ 428 միլիոն դոլար:*

### ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՓԱՌԱՏՈՆԸ

*Ապրիլի 28-ին Հայաստանի ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում մեկնարկեց «Ազգային Պատկերասրահ» միջազգային երաժշտական իններորդ փառատոնը: Այս տարի այն նվիրված է ականավոր երաժիշտ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, փառատոնի գեղարվեստական խորհրդի նախկին նախագահ Էդվարդ Միրզոյանի հիշատակին:*

*Փառատոնին այս տարի մասնակցում են նաեւ պատանի քանոնահար Նարեկ Կազազյանը, Ռուսաստանից աշխարհահռչակ վիրտուոզ բալալայկահար Անդրեյ Գորբաչովը, Էդվարդ Միրզոյանի անվան նորաստեղծ լարային քառյակը, Իսպանիայի ֆլեյտահարուհի Սառա Ուռենան, այլ անվանի երաժիշտներ:*

*«Ազգային Պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնը 2008 թվականին ընդգրկվել է Հայաստանի մշակույթի նախարարության Պետական աջակցության ծրագրերի ցանկում:*

CyanMagentaYellowBlack



## ԱՎԱՆԴՈՒՅԹ

### ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՕՐԸ՝ ՄԱՅԻՍԻ 4-ԻՆ



Հայ գրականության դասական, իր ժամանակի մանկավարժության ջահակիր, հասարակական գործիչ, թումանյանական «Վերնատան» սյուներից մեկին՝ Ղազարոս Աղայանին (1840-1911) նվիրված պոեզիայի ավանդական տոնը, այս տարի եւս, կկայանա գրողի ծննդավայրում, Բոլնիսիի շրջանի Բոլնիս-Խաչենում, մայիսի 4-ին, ժամը 12-ին: Ավանդույթին սպասվում են հյուրեր, գրողներ, մտավորականներ, ինչպես եւ՝ գրականության սիրահարներ Թբիլիսիից, Երեւանից, Վրաստանի եւ Հայաստանի տարբեր շրջաններից:

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՄԱՅԻՍ



*9.05.2013. Հիսուս Քրիստոսի Համբարձման տոն*

Տոնը նշվում է Քրիստոսի Հարության 40-րդ օրը, 35 օրվա շարժունակությամբ՝ ապրիլի 30-ից մինչեւ հունիսի 3-ը՝ հինգշաբթի: Հարությունից հետո Քրիստոս 40 օր մնում է երկրի վրա եւ երեւում Իր աշակերտներին:

Քրիստոսի Համբարձման տոնն ուղեկցվում է նաեւ ժողովրդական հանդիսությունններով եւ կոչվում է Ջանգյուլում (գյուլ՝ նշանակում է վարդ): Հնում Համբարձման օրվա տոնակատարությունները սկսվում էին չորեքշաբթիից: Կանայք այդ օրն անվանում էին «Ծաղկամոր կիրակի»:

Ծաղկամայրն, ըստ ավանդության, քրիստոնյա Վարվառե կույսն է:

Հայ Առաքելական եկեղեցում մայիսի 1-ը հիշատակվում է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու օր:

*12.05.2013. Երկրորդ Ծաղկազարդ*

Քրիստոսի Համբարձման տոնին հաջորդող կիրակի օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է Երկրորդ Ծաղկազարդը: Տոնի անվանումն առաջացել է Զատիկի՝ Սուրբ Հարությանը նախորդող Ծաղկազարդի տոնի անվանումից:

Երկրորդ Ծաղկազարդն արդեն Համբարձյալ Քրիստոսի Վերին Երուսաղեմ մտնելու հիշատակն է, երբ Նրան ցնծությամբ դիմավորում էին հրեշտակները:

*19.05.2013. Հոգեգալուստ (Պենտեկոստե)*

Առաքյալների վրա Սուրբ Հոգու իջման հիշատակության Տոնն է, որ տեղի է ունեցել Սուրբ Հարության հիսուներորդ օրը: Այդ պատճառով էլ Հոգեգալուստը միշտ տոնում են Զատիկից հիսուն օր հետո: Սբ. Հոգին Սբ. Երրորդության երեք անձերից մեկն է, համագո եւ հավասար Հորը եւ Որդուն:

## ԱՆՑԱԿԵՏ

### «ԿԱԶԲԵԳԻ-ՎԵՐԻՆ ԼԱՐՍ»-Ը ԿԳՈՐԾԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՌԵԺԻՄՈՎ

«Կազբեգի-Վերին Լարս» անցակետը հունիսի 1-ից կաշխատի շուրջօրյա ռեժիմով: Այս մասին հայտարարել է Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն:

Նրա խոսքով՝ Լարսի անցակետի անընդհատ աշխատանքն անհրաժեշտ է, որպեսզի վրացական արտադրանքն ամենակարճ ճանապարհով հասնի Ռուսաստանի շուկա:

Ինչպես նշել է Աբաշիձեն, այս հարցում շահագրգռված է նաեւ թուրքական կողմը, քանի որ նրանք ցանկանում են որոշակի բեռներ փոխադրել Սոչիի օլիմպիադայի համար: Վարչապետի հատուկ ներկայացուցչի խոսքով՝ դա շատ շահավետ կլինի Վրաստանի համար:

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ

### ՋՈՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻՆ

***Թբիլիսիի թիվ 104 կրթօջախում կայացավ «Հավասարումը մաթեմատիկայում» ցերեկույթ, որի կազմակերպիչը մաթեմատիկայի ուսուցչուհի Սիլվա Սարուխանյանն էր, իսկ մասնակիցները դպրոցի հինգերորդ, յոթերորդ դասարանների շնորհալիներն էին:***




Այդ հետաքրքիր եւ ուսանելի ցերեկույթին հրավիրվել էին նաեւ հյուրեր այլ կրթօջախներից, ինչը առանձնակի ոգեւորություն էր հաղորդում օրվա հերոսներին:

Հինգերորդցիների բեմադրած Արեւելյան հեքիաթի հիմքում գիտության արժեւորումն էր: Բեմականացման հերոսները իրենց իսկ խաղով համոզվեցին, թե ինչ գանձ է ուսումը, գիտելիքը, թե առաջին պահ սոսկ թիվ ու հաշիվ ենթադրող մաթեմատիկան, իրականում ինչպես է զարգացնում իրենց տրամաբանությունը, ինչը այնքան անհրաժեշտ է կյանքում ճիշտ որոշումներ կայացնելու, կողմնորոշվելու համար...

Այո, առանց գիտելիքների հեռու չես գնա, իսկ առանց գեղեցիկ խոսքի, առանց գեղեցիկ երգի, պարի կյանքը կդառնա գորշ, սառն ու անհույզ... Սա կյանքի մեծ ճշմարտություններից մեկն է, եւ Սիլվա Սարուխանյան բազմափորձ ուսուցչուհին, անշուշտ, ջանադիր ու նվիրումով լի աշխատանքի շնորհիվ, կարողացել էր, միջոցառման նաեւ գեղարվեստական հագեցվածությամբ, այդ մեծ ճշմարտությունը ուսուցանել իր սաներին:

Սիլվա Սարուխանյանին՝ գեղեցիկ ու նաեւ ուսանելի միջոցառման համար, իրենց շնորհակալությունը հայտնեցին թիվ 103 վրաց-հայկական դպրոցի ուսմասվար Հասմիկ Պապիկյանը, թիվ 104 դպրոցի կրթօջախի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, ուսմասվար Ալմարի Սիրադեղյանը:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

## ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

### ՎՐԱՍՏԱՆԸ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՍՈՉԻԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Վրաստանի օլիմպիական ազգային կոմիտեն իր արտահերթ նիստում ընդունել է 2014 թվականին Սոչիի օլիմպիական խաղերին Վրաստանի հավաքականի մասնակցության որոշումը: Մասնակցության օգտին քվեարկել են ՕԱԿ-ի բոլոր 46 անդամները: ՕԱԿ-Ի նախագահ Լերի Խաբելովը նշել է, որ մայիսի 7-ին իրենց խաղերին մասնակցության պաշտոնական հայց կներկայացնեն:

### ՎՐԱՍՏԱՆԻ ՁՅՈՒԴՈՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում եզրագիծը հատեց ձյուդոյի Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցում էին 44 երկրի շուրջ 500 մարզիկ: Անհատական մրցաշարում Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցեց երեք ոսկե, երեք արծաթե եւ մեկ բրոնզե մեդալներ: Մայրցամաքի չեմպիոններ դարձան Ամիրան Պապինաշվիլին (60կգ քաշային կարգ), Լաշա Շավդաթուաշվիլին (66կգ), Ավթանդիլ Ճրիկիշվիլին (81կգ): Պատվանդանի երկրորդ աստիճանը զբաղեցրին Նուգզար Տատալաշվիլին (73կգ), Վառլամ Լիպարտելիանին (90կգ) եւ Ադամ Օքրուաշվիլին: Բրոնզե մեդալակիր դարձավ Զեբեդա Ռեխվիաշվիլին (73կգ): Թիմային հաշվարկի եզրափակիչում վրաց մարզիկները՝ 4:1 հաշվով պարտության մատնեցին Ռուսաստանի հավաքականին եւ նվաճեցին Եվրոպայի չեմպիոնի կոչումը:

Ինչ վերաբերում է առաջնությանը մասնակից Հայաստանի ձյուդոյիստներին, ապա նրանք չնվաճեցին ոչ մի մեդալ:

### ՀԱՅ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ՝ «ԱԲԽԱԶԻԱՅԻ ԳԱՎԱԹԻ» ԳԱՎԱԹԱԿԻՐՆԵՐ

Թբիլիսիում եզրագիծը հատեց սուսերամարտի «Աբխազիայի գավաթի» խաղարկման մրցաշարը: Խաղարկմանը մասնակցում էին Վրաստանի տարբեր երկրամասերի, ինչպես նաեւ Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Ռուսաստանի եւ Քուվեյթի շուրջ 80 մարզիկմարզուհիներ: Թիմային հաշվարկում մրցաշարի հաղթող դարձան հայաստանցի սուսերամարզիկները, որոնք էլ արժանացան մրցաշարի գլխավոր պարգեւին: Թիմային հաշվարկում երկրորդը Վրաստանի հավաքականն էր:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 6.Տխիլ: 8.Աղացած ցորեն: 10.Թունավոր միջատ: 11.Շինանյութ: 13.Զինջ, անբիծ, կեղտ չպարունակող: 14.Ոչ օրինավոր, օրինազանց, խարդախ: 16.Հողը հերկելու գործիք: 17.Կրծող կենդանի: 18.Երկրամաս Ասիայի հյուսիսային մասում: 20.Ամերիկացի երգչուհի եւ երգահան: 21.Կանչ, դիմում, հրավեր: 22.Անգլիացի տնտեսագետ եւ փիլիսոփա Ադամ ...: 26.Սպիտակ, արծաթափայլ, կռելի, փափուկ մետաղ: 28.Տվյալ վայրին բնորոշ միանման եղանակների բազմամյա կրկնություն: 31.Խարան: 32.Հուր, կրակ: 34.Երկաթե ճանկ, կեռ, քերիչ: 35.Նանայացի որսորդ Դերսու ...: 36.Ձիու «բերանին»: 38.Գեներատորի փաթույթի առանձին փունջ, ինչպես եւ նրան միացած էլեկտրահաղորդալարը: 41.Ցորենի, ընդեղենի հասունացած գլուխ: 43.Վրացի բալերինա ... Թումանիշվիլի: 45.Կարտոֆիլի «ալյուր»: 48.Իտալացի երգահան Ջուզեպպե Վերդիի օպերա հինգ գործողությամբ «... Կարլոս»: 49.Հայաստանի սփյուռքի նախարարի տեղակալ ... Զիլավյան: 52.Զիգ, ամուր, սեղմ: 53.Նվագարան: 54.Բնական, իներտ, ածխաթթու: 55.Կենդանու սրածայր եղունգ, մագիլ: 56.Ցավի ձայն, կանչ, աղաղակ: 57.Վերք (բրբ.): 58.Կեղտ: 59.Նշան, կետ, թիվ: 60.Կաթնամթերք:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Գարնան առաջին ծաղիկը: 2.Պատկեր: 3.Հանգստի պահ, ընդմիջում: 4.Տվյալ օրը: 5.Նշանավոր հույն մաթեմատիկոս, ֆիզիկոս, ճարտարագետ եւ մեխանիկ: 7.Աշակերտներին ու ուսանողներին կրթություն տվող անձնավորություն: 9.Ներքին օրգան: 12.Քաղցր, համեղ: 15.Ֆրանսիացի օպերային երգչուհի եւ կոմպոզիտոր ... Վիարդո-Գարսիա: 19.Առանց կոշիկների, բոկոտն: 23.Տիկնոջը դիմելու ձեւ Ֆրանսիայում: 24.Հուղարկավորություն: 25.Մարդու մարմնի արտաքին ծածկույթը: 27.Մանկական կռնածեւ խաղալիք՝ դարձդարձիկ: 29.Չեխ նկարիչ եւ գրող Յոզեֆ ...: 30.Գործելու շյուղ: 32.Կոշիկի եւ կաշվե իրերի հայտնի խանութ-սրահ: 33.Թռիչք, ոստյուն: 37.Սիրիայի 16-րդ նախագահ Բաշար Հաֆեզ ալ-...: 39.Մանկական խաղ: 40.Համեմ, կոտեմ, ռեհան: 41.Ընտանի թռչուն: 42.Աշխարհի ամենախոշոր անապատը: 44.Ռուս կոնստրուկտոր, ռուսական բանակի գեներալ-մայոր Սերգեյ ...: 46.Զինվորական աստիճանավոր: 47.Տուփ, գանձանակ: 50.Նուրբ շերտավոր քաղկեդոնի տեսակի միներալ, կիսաթանկարժեք քար: 51.Ջրախոտազգիների ընտանիքին պատկանող խոտաբույս՝ ... լեզու:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հնդկաչին: 6.Արձագանք: 11.Գումարում: 12.Այծ: 13.Ռոզալիա: 15.Կեշա: 17.Լիմա: 18.Այգի: 19.Բնորդ: 21.Նաղաշ: 23.Նվագ: 25.Արվարձան: 27.Նոյ: 29.Նախնադար: 31.Բույս: 33.Սավան: 36.Ծալկա: 38.Էմմա: 39.Առնո: 40.Գրող: 43.Դերանուն: 44.Տրե: 45.Հեռագիր: 47.Սպիտակուց: 48.Կինոնկար:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Նամ: 3.Կարս: 4.Չեմպիոն: 5.Նշանաբան: 6.Այծքաղ: 7.Ձեռագիր: 8.Գազա: 9.Նալ: 10.Իգական: 14.Ամրան: 16.Շաղախ: 20.Վարս: 22.Շտապ: 24.Զոբ: 26.Զավար: 28.Յուղաներկ: 29.Նուարդ: 30.Արմենակ: 32.Սանահին: 34.Նաղարա: 35.Խարտոց: 37.Կարապ: 41.Ծնոտ: 42.Կռան: 46.Գեա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge skype: VRASTAN-1920
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445